

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԴԱՅՄԵՆՇՆ» փակ բաժնետիրական ընկերության Բաժնետերերի հիմնադիր ժողովի 11/06/2018թ. որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

Հաստատված է նոր խմբագրությամբ «Դայմենշն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի 24/02/2022 արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ ժողովի նախագահ (իրավասու անձի պաշտոնը)

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Դավիթ Հակոբյան

(անուն, ազգանուն, ստորագրություն)

(ստորագրություն)

«ԴԱՅՄԵՆՇՆ» փակ բաժնետիրական ընկերության

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

(Նոր խմբագրությամբ)

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Դայմենշն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի, որոնք բաշխվում են միայն նրա հիմնադիրների կամ նախապես որոշված այլ անձանց միջև:
- 1.2. Ընկերությունը ստեղծված է համարվում և նրա իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին ներդրումային ընկերությունների գրանցումների մատյանում գրառման) պահից:
- 1.3. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ նաև՝ **Օրենսգիրք**), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**), «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ օրենսդրական այլ ակտերով և Կանոնադրությամբ (այսուհետ՝ **Կանոնադրություն**):
- 1.4. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանումը պարունակող կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև ֆիրմային այլ ռեկվիզիտներ:
- 1.5. Ընկերությունը կարող է ունենալ այլ խորհրդանիշ և օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ:
- 1.6. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Կանոնադրությամբ, Օրենսգրքով, Օրենքով և այլ իրավական ակտերով:
- 1.7. Ընկերության ֆիրմային անվանումն է՝  
հայերեն լրիվ՝ «Դայմենշն» փակ բաժնետիրական ընկերություն  
կրճատ՝ «Դայմենշն» ՓԲԸ  
ռուսերեն լրիվ՝ Закрытое акционерное общество “Дайменшн”  
կրճատ՝ ЗАО “Дайменшн”  
անգլերեն լրիվ՝ Closed joint stock company “Dimension”  
կրճատ՝ CJSC “Dimension”
- 1.8. Ընկերության իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ., ք. Երևան 0019, Բաղրամյան փ. 2, 27/1 ոչ բնակելի տարածք:
- 1.9. Եթե Կանոնադրության համապատասխան դրույթի բովանդակությունից այլ բան չի բխում, ապա Կանոնադրությունում եզակի թվով ներկայացված բառերը արտահայտում են նաև հոգնակի իմաստ և հակառակը,
- 1.10. Կանոնադրության որևէ դրույթի անվավերությունը կամ ուժը կորցնելը որևէ ձևով չի ազդում Կանոնադրության ամբողջականության վրա. մնացյալ դրույթները շարունակում են գործել և մեկնաբանվել այնպես, ինչպես դրանք կմեկնաբանվեին անվավեր կամ ուժը կորցրած դրույթների բացակայության

դեպքում: Կանոնադրության որևէ դրույթի անհստակության կամ ոչ ամբողջական լինելու դեպքում, այն մեկնաբանվում և լրացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

- 1.11. Կանոնադրությամբ չկարգավորված բոլոր հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրության համաձայն:

## **2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**

- 2.1. Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:
- 2.2. Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
- 2.3. Ընկերությունը կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 2.4. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:
- 2.5. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության/ընկերակցության (այդ թվում դուստր և կախյալ ընկերության) հիմնադիր (մասնակից) բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

## **3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

- 3.1. Ընկերության ստեղծման նպատակն է գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:
- 3.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակն է ներդրումային ծառայությունների իրականացումը:
- 3.3. Ընկերությունը կարող է իրականացնել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված ցանկացած գործունեություն:
- 3.4. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից:
- 3.5. Ընկերությունն իր գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:

#### **4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ, ԱՅԼ ԿԱՊԻՏԱԼՆԵՐ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐ**

- 4.1.** Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:
- 4.2.** Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 429,500,000 (չորս հարյուր քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 42,950 (քառասուններկու հազար ինը հարյուր հիսուն) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Բոլոր 42,950 (քառասուններկու հազար ինը հարյուր հիսուն) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:
- 4.3.** Ընկերությունն ունի կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով հայտարարված, բայց չտեղաբաշխված 2,000,000 (երկու միլիոն) հատ հասարակ բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:
- 4.4.** Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:
- 4.5.** Ընկերության կանոնադրական կապիտալը չափը կարող է մեծացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ իրացված և վաճառված են:
- 4.6.** Ընկերության բաժնետերերն ունեն Ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կանոնադրական կապիտալում իրենց բաժնետոմսերի քանակին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունք:
- 4.7.** Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի՝
  - ա. լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) և յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմսերի քանակը՝ այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում.
  - բ. լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:
- 4.8.** Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

- 4.9.** Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝
- ա)** շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ.
  - բ)** ընկերության զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային ու անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցելով կանոնադրական կապիտալ:
- 4.10.** Ընկերությունն իրավունք ունի բաժնետերերի ընդհանուր ժողովում որոշում ընդունել կանոնադրական կապիտալը հետևյալ ձևերով նվազացնելու մասին՝
- ա.)** բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցմամբ.
  - բ.** բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում Օրենքով նախատեսված դեպքերում, դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:
- 4.11.** Հիմնադիրների (բաժնետերերի) ավանդների հաշվին ստեղծված, ինչպես նաև Ընկերության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում արտադրված և ձեռքբերված գույքն Ընկերությանն են պատկանում սեփականության իրավունքով:
- 4.12.** Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվետվության տվյալներով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 4.13.** Ընկերությունում ստեղծվում է պահուստային (ապահովագրական) հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով: Այս կապիտալի ձևավորումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված նպատակների համար:
- 4.14.** Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև շահույթաբաժինների վճարման, աշխատակիցների բաժնետիրացման, սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

## **5. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ**

- 5.1.** Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել՝
- ա.** բաժնետոմսեր
  - բ.** պարտատոմսեր
  - գ.** «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ արժեթղթեր:

## **6. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 6.1.** Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը Օրենքի և Ընկերության կանոնադրությամբ համաձայն իրավունք ունի՝
- 6.1.1.** մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
  - 6.1.2.** մասնակցել Ընկերության գործերի կառավարմանը.

- 6.1.3.** ստանալ շահութաբաժիններ՝ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
- 6.1.4.** առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.
- 6.1.5.** ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.
- 6.1.6.** Ընկերության հիմնադիր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
- 6.1.7.** հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում.
- 6.1.8.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
- 6.1.9.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
- 6.1.10.** Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը.
- 6.1.11.** Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական բաժնետոմսեր.
- 6.1.12.** օգտվել Ընկերության կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
- 6.2.** Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն՝
- 6.2.1.** մասնակցել Ընկերության կառավարմանը՝ Օրենքով նախատեսված սահմանափակումները հաշվի առնելով.
- 6.2.2.** Ընկերության ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
- 6.2.3.** Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ որոշվող իրենց հասանելիք մասը,
- 6.2.4.** Ընկերության միջոցների հաշվին կանոնադրական կապիտալի մեծացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակի սովորական բաժնետոմսեր.
- 6.2.5.** հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ Օրենքով նախատեսված սահմանափակումները հաշվի առնելով.

- 6.2.6.** ձայնի իրավունքով մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովի աշխատանքներին՝ Օրենքով սահմանված սահմանափակումները հաշվի առնելով.
- 6.2.7.** ստանալ շահաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից՝ Օրենքով սահմանված սահմանափակումները հաշվի առնելով.
- 6.2.8.** առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը:
- 6.3.** Բաժնետերերը պարտավոր են՝
- 6.3.1.** կանոնադրությամբ սահմանված կարգով, չափերով, եղանակներով և ժամկետներում կատարել դրամական և գույքային ներդրումներ.
- 6.3.2.** չիրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ.
- 6.3.3.** կատարել Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտավորություններ և պարտականություններ:
- 6.4.** Ընկերության բաժնետերերն ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը օտարելու կամ Օրենքով չարգելված ձևով այլ անձանց փոխանցելու իրավունք: Ընդ որում մյուս բաժնետերերը ունեն այդ բաժնետոմսերը նույն գնով ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված կարողով ձեռքբերման նախապատվության իրավունք: Բաժնետերերի կողմից իրենց վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում Ընկերությունն ունի այդ բաժնետոմսերը սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով ձեռք բերելու նախապատվության իրավունք:
- 6.5.** Բաժնետերերի նախապատվության իրավունքի (այլ բաժնետիրոջ կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից 30 օր: Եթե Ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներից ոչ մեկը չի օգտվում նախապատվության իր իրավունքից, ապա Ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ դրանից հրաժարվելու մասին որոշումը կայացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը 30 աշխատանքային օրվա ընթացքում սկսած այն պահից, երբ բաժնետերերից ոչ մեկը Կանոնադրությամբ և Օրենքով սահմանված կարգով չի օգտվում նախապատվության իր իրավունքից
- 6.6.** Բաժնետերերը պարտավոր են Ընկերությանը տրամադրել իրենց ծանուցման հասցեները, ներառյալ էլեկտրոնային փոստի հասցեն և համաձայնում են ծանուցվել տրամադրված հասցեով: Ծանուցման հասցեի փոփոխման դեպքում

Ընկերությանը չտեղեկացնելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է հասցեի փոփոխման մասին տեղեկությունը չտրամադրած բաժնետերը:

## **7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱՔԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 7.1. Ընկերության զուտ շահույթի հիսուն տոկոսը ենթակա է հայտարարման և վճարման որպես շահութաբաժին տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց, եթե Ընկերության ընդհանուր ժողովը այլ բան չի որոշել:
- 7.2. Ընկերությունն իրավունք ունի Օրենքով սահմանված կարգով որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամսյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:
- 7.3. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության տվյալ տարվա ընթացիկ զուտ շահույթից:
- 7.4. Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել հատուկ այդ նպատակով ստեղծված Ընկերության հիմնադրամների հաշվից:
- 7.5. Ընկերության տվյալ տարվա գործունեության արդյունքների հիման վրա սովորական բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինը արտոնյալ բաժնետոմսերի համար սահմանված շահութաբաժինը գերազանցելու դեպքում, արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստանալ սովորական բաժնետոմսերին հասանելիք փաստացի շահութաբաժինը:
- 7.6. Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ միջանկյալ (եռամսյակային և կիսամսյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է ժողովը Օրենքով սահմանված կարգով:
- 7.7. Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:
- 7.8. Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:



- 7.9.** Յուրաքանչյուր դասի արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը և լուծարային արժեքը (որը վճարվում է Ընկերության լուծարման ժամանակ) սահմանվում են Կանոնադրությամբ՝ դրանց տեղաբաշխման և/կամ հայտարարման որոշումն ընդունելուց հետո՝ բաժնետերերի արտահերթ ժողովում Կանոնադրության մեջ համապատասխան փոփոխությունների կատարմամբ: Եթե կանոնադրությամբ չի նախատեսվում արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը, ապա դրանց սեփականատերերը հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի հետ շահութաբաժիններ ստանալու հավասար իրավունք ունեն:
- 7.10.** Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ թողարկվում և տեղաբաշխվում են երկու կամ ավելի դասի արտոնյալ բաժնետոմսեր, ապա պետք է սահմանվի նաև շահութաբաժինների և լուծարային արժեքի վճարման հերթականությունը:
- 7.11.** Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե՝
- ա)** լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը.
  - բ)** շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.
  - գ)** Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:
- 7.12.** Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի և այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար սահմանված չի շահութաբաժնի չափը, եթե շահութաբաժիններն ամբողջությամբ վճարելու որոշում չի ընդունված արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է:
- 7.13.** Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է, եթե շահութաբաժիններն ամբողջությամբ վճարելու որոշում չի ընդունված արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնք վերոհիշյալ արտոնյալ բաժնետոմսերի նկատմամբ շահութաբաժիններ ստանալու առաջնահերթության իրավունք են տալիս:

## **8. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

- 8.1.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն (այսուհետ նաև՝ **Ժողով**) Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
- 8.2.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝
- 8.2.1.** Ընկերության կանոնադրության հաստատումը, Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
- 8.2.2.** Ընկերության վերակազմակերպումը.
- 8.2.3.** Ընկերության լուծարումը.
- 8.2.4.** Ընկերության լուծարային հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը.
- 8.2.5.** Ընկերության Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամներին նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- 8.2.6.** հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
- 8.2.7.** բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.
- 8.2.8.** ՀՀ օրենսդրությամբ Ընկերության ընդհանուր կապիտալի և/կամ կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նկատմամբ պահանջների փոփոխման դեպքում, մինչև համապատասխան պահանջների բավարարումը դրա լրացման վերաբերյալ հարցը, ինչի մասին որոշումը ընդհանուր ժողովը ընդունում է քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ.
- 8.2.9.** Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը:
- 8.2.10.** բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման (ինչպես դրամով, այնպես էլ ցանկացած գույքով), ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
- 8.2.11.** Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- 8.2.12.** Ընկերության ներքին աուդիտի անկախ ստորաբաժանման անդամի (անդամների) ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
- 8.2.13.** Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը:

- 8.2.14.** Օրենքով սահմանված դեպքերում Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
- 8.2.15.** Անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման կամ օգտագործման կամ օտարման վերաբերյալ գործարքների, այլ իրային իրավունքների վերաբերյալ գործարքների կնքումը, փոփոխությունը և դադարեցումը;
- 8.2.16.** Ընկերության գույքը այլ անձանց իրավունքներով ծանրաբեռնելու, ներառյալ գրավադրման վերաբերյալ գործարքների կնքումը, փոփոխումը և դադարեցումը;
- 8.2.17.** Երաշխավորության կամ համանման իրավական հետևանքներ առաջացնող գործարքների կնքումը, փոփոխումը և դադարեցումը:
- 8.2.18.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգը.
- 8.2.19.** հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
- 8.2.20.** Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
- 8.2.21.** Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (բաժանումը) և կոնսոլիդացիան (համախմբումը),
- 8.2.22.** գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ Օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.
- 8.2.23.** գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում, եթե ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի քանակը գերազանցում է 10ը:
- 8.2.24.** Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում.
- 8.2.25.** Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, գլխավոր տնօրենի, տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
- 8.2.26.** Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը կամ դրանցում մասնակցությունը.
- 8.2.27.** Ընկերության կողմից հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը կամ դրանցում մասնակցությունը.
- 8.2.28.** Կանոնադրությամբ և/կամ Օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը.
- 8.2.29.** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշումների ընդունումը:

**8.3.** Ժողովի նախապատրաստման ընթացքում խորհուրդը, իսկ Օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերում՝ ժողովը գումարող անձինք, որոշում են՝

ա) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը.

բ) ժողովի օրակարգը.

գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.

ե) բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.

զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

**8.4.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կազմավորվում է ժողովին մասնակցելու իրավունք ունեցող հետևյալ անձանցից՝

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)

բ) Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի անդամները, գլխավոր տնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

գ) Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.

դ) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).

ե) Ընկերության խորհրդի նախագահի որոշմամբ՝ այլ անձինք:

**8.5.** Ընկերության ընդհանուր ժողովի նիստի ընթացքում ժողովին մասնակցող ձայնի իրավունք սովորաբար բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը ընտրում են ընդհանուր ժողովի նիստի նախագահ և քարտուղար:

**8.6.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Ընկերության խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավելի:

Եթե ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

- 8.7.** Քվեարկությունը բաժնետերերի ընդհանուր ժողովում իրականացվում է «մեկ ձայնի իրավունք տվող բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով» :
- 8.8.** Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով: Ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովը համարվում է նրա առաջին տարեկան ժողովը:
- 8.9.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Ժողովի գումարման մասին ծանուցումը բաժնետերերին ուղարկվում է գումարումից առնվազն հինգ օր առաջ:
- 8.10.** Ընկերության արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:
- 8.11.** Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Ընկերության խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) կամ Գլխավոր տնօրենի պահանջով: Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով: Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե սույն կետում նշված արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին:
- Արտահերթ ժողովի՝ հեռակա կարգով քվեարկությամբ գումարման մասին խորհրդի որոշմամբ պետք է սահմանվեն՝
- ա) քվեաթերթիկի ձևն ու բովանդակությունը.
  - բ) Ընկերության բաժնետերերին՝ քվեաթերթիկները և բաժնետերերին տրամադրվող տեղեկությունները և նյութերը առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը.
  - գ) բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելու վերջին ժամկետի տարին, ամիսը, ամսաթիվը:
- 8.12.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ կապի այլ միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Նման նիստի մասնակիցներին որոշումների վերաբերյալ արդյունքներն ուղարկվում են նիստի արձանագրությունը կազմելու օրվանից մեկ շաբաթվա ընթացքում:
- 8.13.** Ընկերության ընդհանուր տարեկան ժողովի, արտահերթ ընդհանուր ժողովների գումարման նախապատրաստումը, օրակարգի վերաբերյալ առաջարկությունները, բաժնետերերի մասնակցության կարգը և ժողովի

արձանագրությունները կազմակերպվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- 8.14.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև Օրենքով ու Կանոնադրությամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:
- 8.15.** Բաժնետերերի ընդհանուր ժողովը իրավասու է (քվորում ունի), եթե նրա աշխատանքներին մասնակցում են (ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահի դրությամբ) Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50% տնօրինող բաժնետերեր, բացի Օրենքով և Կանոնադրությամբ սահմանված դեպքերից:
- 8.16.** Քվորումի բացակայության դեպքում գումարվում է նոր ժողով, որը իրավասու է, եթե նրա աշխատանքներին մասնակցում են (ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահի դրությամբ) Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 30% տնօրինող բաժնետերեր, բացի Օրենքով և Կանոնադրությամբ սահմանված դեպքերից:
- 8.17.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:
- 8.18.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է հաղորդվեն Ընկերության բաժնետերերին (ըստ պահանջի) 45 օրվա ընթացքում:
- 8.19.** Բաժնետերը իրավունք ունի դատական կարգով գանգատարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և Ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումը, եթե նա չի մասնակցել ժողովին կամ այդ որոշման դեմ է քվեարկել, և այդ որոշմամբ խախտվել են նրա օրինական շահերը և իրավունքները:
- 8.20.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ Օրենքով սահմանված կարգով հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով): Տարեկան ժողովը, ինչպես նաև Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի ժբ) ենթակետով սահմանված դեպքում հրավիրված արտահերթ ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:
- 8.20.1.** Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ:
- 8.20.2.** Հեռակա կարգով քվեարկության դեպքում քվեաթերթիկները, ինչպես նաև բաժնետերերին տրամադրվող տեղեկություններն ու նյութերը պետք է ուղարկվեն բաժնետերերին՝ լրացված քվեաթերթիկների ընդունումը Ընկերության կողմից ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ:

- 8.20.3.** Հեռակա կարգով կատարված քվեարկության արդյունքներն ամփոփվում են և ուղարկվում բաժնետերերին՝ բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելու վերջին ժամկետի ավարտից հետո 15 օրվա ընթացքում:
- 8.21.** Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի, արտահերթ ընդհանուր ժողովների գումարման նախապատրաստումը, օրակարգի վերաբերյալ առաջարկությունները, բաժնետերերի մասնակցության կարգը, քվեարկությունը և ժողովի արձանագրությունները սույն Կանոնադրությամբ չկարգավորված մասով կազմակերպվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 8.22.** Օրենքի Գլուխ IX նորմերի պահանջները ամբողջությամբ չեն կիրառվում, եթե ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի քանակը չի գերազանցում 10-ը:
- 8.23.** Եթե ժողովի որոշումն ընդունվել է Ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի կամ միաձայնությամբ, ապա Օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ կետով, 68-րդ հոդվածի 10-րդ կետով, 69-րդ հոդվածի 4-րդ կետով, 70-րդ հոդվածի 2-6-րդ կետերով, 71-րդ հոդվածով, 73-րդ հոդվածով, 74-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ-չորրորդ մասերով, 2-րդ կետով և 4-րդ կետի առաջին մասով, 75-րդ հոդվածով և 79-81-րդ հոդվածներով սահմանված պահանջները, ինչպես նաև Կանոնադրությամբ սահմանված նույնաբովանդակ դրույթները չպահպանելը չի կարող հիմք հանդիսանալ այդ հիմքերով որոշումներն անվավեր ճանաչելու համար:

## **9. ԽՈՐՀՈՒՐԴԸ**

- 9.1.** Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Խորհուրդը՝ Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ ժողովի իրավասությանը չվերապահված հարցերի սահմաններում:
- 9.2.** Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝
- 9.2.1.** Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
- 9.2.2.** Ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի.
- 9.2.3.** Ժողովի օրակարգի հաստատումը.
- 9.2.4.** գույքի շուկայական արժեքի որոշումը.
- 9.2.5.** Ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը.
- 9.2.6.** Կանոնադրությամբ սահմանված կարգով նախապատրաստում է Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ առաջարկություններ ժողովին
- 9.2.7.** Ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը.

- 9.2.8.** Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
- 9.2.9.** Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը.
- 9.2.10.** Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
- 9.2.11.** հաստիքացուցակի հաստատումը.
- 9.2.12.** ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.
- 9.2.13.** Օրենքով և Կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:
- 9.3.** Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության Գլխավոր տնօրենի պահանջով:
- 9.4.** Խորհուրդը իրավասու է (քվորում ունի), եթե Խորհրդի նիստին ներկա են Խորհրդի անդամների 50%--ը բացի Օրենքով սահմանված դեպքերից:
- 9.5.** Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝
- ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
  - բ) նիստին ներկա անձինք.
  - գ) նիստի օրակարգը.
  - դ) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.
  - ե) նիստում ընդունված որոշումները:
- 9.5.1.** Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:
- 9.6.** Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, ընդ որում ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:
- 9.7.** Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ:
- 9.8.** Ընկերության Խորհուրդը կազմավորվում է ընդհանուր ժողովի որոշմամբ: Ընկերության Խորհուրդը բաղկացած է առնվազն երեք անդամից, որոնք ընտրվում են երկու տարի ժամկետով: Ժողովը կարող է որոշում ընդունել Խորհրդի ցանկացած անդամի և/կամ բոլոր անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
- 9.9.** Խորհրդի անդամ կարող է լինել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը: Խորհրդի անդամները կարող են վերընտրվել առանց սահմանափակումների:



- 9.10. Ժողովի որոշմամբ Խորհուրդ չստեղծվելու կամ Խորհրդի լիազորությունները դադարեցնելու դեպքում Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի «բ-դ» ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնում է Գլխավոր տնօրենը:
- 9.11. Ժողովի որոշմամբ Խորհրդի նախագահի և Գլխավոր տնօրենի պաշտոնները կարող են համատեղվել (Օրենքով թույլատրված դեպքերում):
- 9.12. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից, Խորհրդի անդամների կազմից՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:
- 9.13. **Խորհրդի նախագահը՝**
  - 9.13.1. կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
  - 9.13.2. գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,
  - 9.13.3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
  - 9.13.4. նախագահում է Ժողովներում, եթե Ժողովի կողմից այլ անձ չի ընտրվել նախագահ:

## **10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ**

- 10.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության Գլխավոր տնօրենը:
- 10.2. Գլխավոր տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ընկերության Ժողովի, Խորհուրդի իրավասություն հանդիսացող հարցերից: Գլխավոր տնօրենը կազմակերպում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների կատարումը, հաշվետու է վերջինիս և իրավունք չունի Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի համար պարտադիր որոշումներ կայացնելու:
- 10.3. Ընկերության Գլխավոր տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության:
- 10.4. Ընկերության Գլխավոր տնօրենը՝
  - 10.4.1. տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
  - 10.4.2. ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
  - 10.4.3. գործում է առանց լիազորագրի.
  - 10.4.4. տալիս է լիազորագրեր.
  - 10.4.5. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
  - 10.4.6. բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.
  - 10.4.7. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

- 10.4.8. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- 10.4.9. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
- 10.4.10. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:
- 10.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության Գլխավոր տնօրենի լիազորությունները պայմանագրով կարող են տրվել այլ առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

**11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱՀՍՎՈՒՄԸ.**

**ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ (ԱՆԿԱԽ) ԱՈՒԴԻՏ**

- 11.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնում են Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանումը և Ընկերության անկախ աուդիտ իրականացնող անձը:
- 11.2. Ներքին աուդիտի ստորաբաժանման լիազորությունները և պարտականությունները սահմանվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և դրանց համապատասխան ընդունված Ընկերության ներքին իրավական ակտերով:
- 11.3. Ընկերության ժողովը որոշում է ներքին աուդիտի ստորաբաժանման կազմը, ներքին աուդիտորների քանակը, նշանակում է Ընկերության ներքին աուդիտի անդամներին (անդամին) և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին:
- 11.4. Ներքին աուդիտի անդամները իրենց գործառույթները իրականացնում են ՀՀ օրենսդրության, մասնավորապես «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և դրանց համապատասխան ընդունված Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:
- 11.5. Ընկերության ամենամյա ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Ընկերությունը պարտավոր է ՀՀ օրենսդրությանը և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ներգրավել Ընկերության կամ նրա մասնակիցների հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ աուդիտորի (արտաքին աուդիտ):

**12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 12.1. ՀՀ տարածքում և նրանից դուրս Ընկերությունը կարող է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստեղծել մասնաճյուղեր և հիմնել ներկայացուցչություններ, որոնց գործունեությունը կարգավորվում է ՀՀ

իրավական ակտերին համապատասխան ընդունված՝ Ընկերության ներքին իրավական ակտերով:

- 12.2. Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչություններն իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:
- 12.3. Ընկերության մասնաճյուղ է համարվում Ընկերության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը, ներառյալ՝ ներկայացուցչական գործառույթները:
- 12.4. Ընկերության ներկայացուցչություն է համարվում Ընկերության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է Ընկերության շահերն ու իրականացնում դրանց պաշտպանությունը:

### **13. ԴՈՒՍՏՐ ԵՎ ԿԱԽՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 13.1. Ընկերությունն իրավունք ունի ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ տնտեսական ընկերություններ ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս:
- 13.2. Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է այդ երկրների օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
- 13.3. Ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) ընկերություն կամ ընկերակցություն նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով հնարավորություն ունի կանխորոշել այդ ընկերության որոշումները:
- 13.4. Ընկերությունը մեկ այլ (հիմնական) ընկերության կամ ընկերակցության նկատմամբ համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերությունը կամ ընկերակցությունն ունի այդ ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 20 տոկոսը:
- 13.5. Ընկերությունը պարտավոր է օրենքով սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին:

#### **Պատասխանատվություն.**

- 13.6. Դուստր ընկերությունը պատասխանատվություն չի կրում հիմնական ընկերության (ընկերակցության) պարտավորությունների համար:

- 13.7.** Հիմնական ընկերությունը (ընկերակցությունը), որը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի, նրա հետ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար:
- 13.8.** Դուստր ընկերության բաժնետերերը (մասնակիցները) իրավունք ունեն հիմնական ընկերությունից (ընկերակցությունից) պահանջել հատուցելու վերջինիս մեղքով դուստր ընկերությանը պատճառված վնասները:
- 13.9.** Վնասները համարվում են պատճառված հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով, եթե դրանք վրա են հասել դուստր ընկերության կողմից հիմնական ընկերության (ընկերակցության) պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով:
- 13.10.** Հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով դուստր ընկերության սնանկության դեպքում հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) սուբսիդիար պատասխանատվություն է կրում նրա պարտքերի համար: Դուստր ընկերության սնանկությունը համարվում է առաջացած հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով, եթե այն վրա է հասել դուստր ընկերության կողմից հիմնական ընկերության (ընկերակցության) պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով:

#### **14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ**

- 14.1.** Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Կանոնադրության փոփոխությունները ուժի մեջ են մտնում պատշաճ կերպով գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրանցելու պահից:
- 14.2.** Մասնաճյուղի և/կամ ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները մտցվում են Ընկերության կանոնադրության մեջ:

#### **15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

- 15.1.** Ընկերությունը լուծարվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Օրենքով սահմանված դեպքերում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով և պահանջներին համապատասխան:
- 15.2.** Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը:
- 15.3.** Նախքան լուծարման մասին որոշում ընդունելն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է հաստատի Ընկերության գլխավոր տնօրենի կողմից ներկայացված ամփոփիչ հաշվեկշիռը և Ընկերության լուծարման նախագիծը:

**15.4.** Ընկերությունը կարող է վերակազմակերպվել բացառապես մեկ այլ ներդրումային ընկերությանը միանալու կամ վերակազմավորվելու ձևով՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և Օրենքի: